



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**  
**ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

Հասցեն՝ Ծառուվյան 1  
 Հեռ. 2-20-20, 2-51-20  
 Ֆաքս 2-20-20, 2-51-20

07 սեպտեմբեր 2012թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 256**

**«Հ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԿԱԳ  
 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ՋՐԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ  
 ԱՆՅԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով և ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին» N 13-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետով

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ**

1. ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձորի քաղաքապետարանի աշխատակազմի ՔԿԱԳ տարածքային բաժնի պետի /պաշտոնի անձնագրի ծածկագիր 1.3-1/ համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացնել մրցույթ՝ 2012թ. հոկտեմբերի 11-ին ժամը 12<sup>00</sup>-ին :
2. Հանձնարարել աշխատակազմի քարտուղարին՝ սահմանված կարգով ապահովել սույն որոշման առաջին կետում նշված մրցույթի անցկացման մասին հայտարարության հրապարակումը և նախապատրաստական աշխատանքների իրականացումը : Հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:



**ՍԻՐԵԿԱՆ ԲԱԲԱՅԱՆ**

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի քաղաքային համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ քաղաքապետարանի աշխատակազմի ՔԿԱԳ տարածքային բաժնի պետի / համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների երրորդ ենթախումբ, պաշտոնի անձնագրի ծածկագիրը՝ 1.3-1 / թափուր պաշտոնի զբաղեցման համար

հիմնական գործառույթների համառոտ բնութագիրը

1. Բաժնի պետը.

ա) բաժնում կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է աշխատանքները.

բ) կատարում է բաժնի գործունեության բնագավառում վարվող քաղաքականության մասով՝ համայնքի ղեկավարի, իսկ համայնքային ծառայության ղեկավարման և կազմակերպման մասով՝ աշխատակազմի քարտուղարի հանձնարարականները.

2. Բաժնի պետը.

ա) կազմակերպում է բաժնի աշխատանքները, իր իրավասության շրջանակներում տալիս է հանձնարարականներ բաժնի աշխատակցին և վերահսկում է դրանց ժամանակին և պատշաճ կատարումը.

բ) կազմակերպում է քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված իրավական ակտերի կատարումը.

գ) կատարում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումները.

դ) իր իրավասության սահմաններում համագործակցում է պաշտոնատար այլ անձանց հետ.

ե) ուսումնասիրում է բաժնի աշխատողի գործունեության դեմ ուղղված բողոքները.

զ) քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ իրականացնելիս ստանում է անհրաժեշտ տեղեկություններ և այլ նյութեր.

է) ուսումնասիրում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման համար տրված դիմումները, կայացնում համապատասխան որոշումներ, պարզաբանում դրանց բողոքարկման ժամկետները և կարգը.

ը) իրականացնում է հսկողություն տարածքային բաժնի ծառայողների կողմից աշխատանքային կարգապահության պահպանման, պաշտոնական պարտականությունների ժամանակին և օրենքի պահանջների համապատասխան կատարման նկատմամբ.

թ) վարում է համապատասխան տարածքային բաժնի արխիվը.

ժ) համայնքի ղեկավարին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնում է հաշվետվություն բաժնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ.

ժա) պատասխանատվություն է կրում բաժնի առջև դրված խնդիրների լուծման համար.

ժբ) համայնքի ղեկավարին և աշխատակազմի քարտուղարին ներկայացնում է բաժնի աշխատանքային ծրագրերը, անհրաժեշտության դեպքում, բաժնի լիազորությունների սահմաններում նախապատրաստում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, միջնորդագրեր և այլ գրություններ.

ժգ) աշխատակազմի քարտուղարին ներկայացնում է առաջարկություններ՝ բաժնի համայնքային ծառայողին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ատեստավորելու, վերապատրաստելու, խրախուսելու, կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ, ինչպես նաև ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ ներկայացնում է բաժնի համայնքային ծառայողի ծառայողական բնութագիրը.

ժդ) ստորագրում է իր և բաժնի անունից պատրաստվող փաստաթղթերը.

ժե) ապահովում է համայնքի ավագանու որոշումների, համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների, ցուցումների, հանձնարարականների և առաջադրանքների կատարումը և արդյունքների մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին ու աշխատակազմի քարտուղարին.

ժզ) իր լիազորությունների սահմաններում համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ.

